Ուրվագիր տասներորդ

Խոստումը, մարգարեությունը, մնացորդը և վերականգնումը

Գրվածքների ընթերցում. Երմ 25:11, 29:10-11, 14, 30:1-3, 10-11, 16-19, 31:1-9, 11-13, 33:6

I. Աստված ընտրեց Իսրայելի զավակներին և նրանց Իր ժողովուրդը դարձրեց՝ որպես եկեղեցու նախատիպ՝ Հռմ 9:11 13, Գործ 7:38.

Ա. Իսրայելի զավակները՝ որպես Աստծու ընտրյալ ժողովուրդ, եկեղեցու մեծագույն հավաքական նախատիպն են՝ Ա Կրթ 10:1-11:

Բ. Այս նախատիպով տեսնում ենք, որ եկեղեցին ընտրվել ու փրկագնվել է Աստծու կողմից, վայելում է Քրիստոսին և Հոգուն՝ որպես կենսամատակարարման, կառուցում է Աստծու բնակատեղը, ժառանգում է Քրիստոսին՝ որպես իր բաժնի, դեգրադացվում է և զավթվում, վերականգնվում է ու սպասում է Քրիստոսի գալստին:

II. Եհովան խոստացավ դարձնել Իսրայելի գերությունը ու նրանց վերադարձնել իրենց երկիր՝ Երմ 16:15, 30:1-3, 10-11, 16-19, 31:1-9, 11-13.

Ա. «Ես գիտեմ այն մտքերը, որոնցով խորհում եմ ձեր մասին,- հռչակում է Եհովան, - խաղաղության մտքեր և ոչ թե դեպի չարիք, որպեսզի ձեզ ապագա և հույս շնորհեմ»՝ 29:11:

Բ. «Հիրավի հավիտենական սիրով սիրել եմ քեզ, դրա համար Ես սիրո հոգածությամբ ձգել եմ քեզ»՝ 31:3:

Գ. «Ձեր գերությունը դարձնելու եմ ու ձեզ հավաքելու եմ բոլոր ազգերից և բոլոր այն վայրերից, ուր ձեզ քշել էի, - հռչակում է Եհովան, - և ձեզ վերադարձնելու եմ այն տեղը, որտեղից ձեզ արտաքսեցի»՝ 29:14:

Դ. «Ես նորից կառուցելու եմ քեզ, և դու կառուցված ես լինելու, ո՛վ Իսրայելի կույս: Դու նորից քեզ զարդարելու ես քո դափներով և դուրս ես գալու ուրախացողների պարախմբի մեջ»՝ 31:4.

Ե. «Նրանք գալու են և երգելու են Սիոնի բարձունքի վրա, և հոսելու են դեպի Եհովայի բարությունը…. Եվ նրանց շունչը ոռոգված պարտեզի պես է լինելու, և նրանք այլևս չեն նվաղելու»՝ խ. 12:

Զ. «Ես նրանց սուգն ուրախության եմ վերածելու և մխիթարելու եմ նրանց, և ուրախացնելու եմ նրանց իրենց տրտմությունից հետո»՝ խ. 13:

III. Երեմիան մարգարեացավ, որ Իսրայելի գերությունը Բաբելոնում յոթանասուն տարի է տևելու՝ 25:11.

Ա. Յոթանասուն տարիների մասին խոսքը մխիթարություն էր Երեմիայի համար ու վստահեցնում էր նրան, որ իր երկրի և իր ժողովրդի, տաճարի ու քաղաքի թշվառ վիճակը միայն յոթանասուն տարի է տևելու՝ 29:10, Զք 7:5:

Բ. Աստված, ճիշտ ինչպես ժողովրդին գերության հանձնեց, այդպես էլ վերադարձնելու է նրանց, ընդ որում ոչ որպես գերյալների, այլ որպես հաղթական ռազմիկների՝ Բ Մնց 36:21-23:

Գ. Քանի որ Դանիելը հասկացավ Իսրայելի գերության յոթանասուն տարիների մասին մարգարեությունները Երմ 25:11-12 և 29:10-14-ում, նա իր երեսը դարձրեց «դեպի Տեր Աստված, որպեսզի Նրան աղոթքում փնտրի»՝ Դնլ 9:2-3.

1. Որպես Աստծու համագործակիցը երկրի վրա՝ Դանիելը Գրվածքներից հասկացավ Աստծու կամքը և աղոթում էր Աստծու կամքի համար՝ Գրվածքների համաձայն:
2. Դանիելն իմացավ, որ Աստծու մտադրությունը Իսրայելի զավակներին Իսրայելի երկիր վերադարձնելն է՝ Երուսաղեմը վերստին կառուցելու համար, ուստի նա աղոթում էր դրա համար. Իսրայելի զավակների՝ Երուսաղեմ վերադառնալու միջոցով Աստված կատարեց Դանիելի աղոթքը:

IV. Եհովան ասաց, որ հավաքելու է իր հոտի մնացորդն ամեն երկրից, ուր Նա քշել էր նրանց, և որ նրանց վերադարձնելու է իրենց արոտավայր, ու նրանք պտղաբերելու են ու բազմապատկվելու՝ Երմ 23:3.

Ա. Յոթանասնամյա գերությունից հետո Աստված եկավ և Իսրայելի զավակներին կանչեց Բաբելոնից վերադառնալու Սուրբ Երկիրը՝ 25:11.
1. Երբ Աստված կանչեց Իր ժողովրդին՝ վերադառնալու Իր ընտրած երկիրը, շատ քչերն արձագանքեցին. մեծամասնությունը մնաց գերության մեջ:
2. Միայն մի փոքր քանակ վերադարձավ ընտրած երկիր. նրանք, ովքեր Երուսաղեմ վերադարձան՝ տաճարը վերստին կառուցելու, Աստծու ժողովրդի մնացորդն էին՝ Եզր 1:3, 2:1-67:
3. Աստված խոստացավ, որ Իր ժողովուրդը վերադառնալու է Երուսաղեմ Բաբելոնում գերության յոթանասուն տարիներից հետո (Երմ 25:11, 29:10). Եզրասի և Նեեմիայի գրքերում մնացորդը վերադարձավ այս խոստման համաձայն:

Բ. Տիրոջ վերականգնման մեջ այսօր մենք Աստծու ժողովրդի մնացորդն ենք, որը վերադարձել է Նրա սկզբնական մտա- դրությանը, մինչդեռ իսկական հավատացյալների մեծ մասը ցրված են և մնում են գերության մեջ՝ Սղմ 126:1-4.
1. Մենք Քրիստոսի Մարմնի անդամներ ենք, ովքեր վերադարձել են միասնության սկզբնական հողի վրա և կանգնած ենք այստեղ որպես Աստծու մնացորդը՝ Երկ Օր 12:5:
2. Քրիստոնյաների մեծամասնությունը մնում է գերության մեջ. միայն փոքր մնացորդն է վերադարձել պատշաճ հողին Աստծու կառույցի համար՝ խ. 11, 16:2, Սղմ 132:13-14:

Գ. Իսրայելի զավակների վերադարձը Բաբելոնից Երուսաղեմ ճանապարհ պատրաստեց Քրիստոսի գալստի համար՝ Մք 5:2, Մտթ 2:4 6, Ղկս 2:4-7.
1. Տիրոջ առաջին գալուստը կախված էր Աստծու ժողովրդի՝ Բաբելոնում իրենց գերությունից Սուրբ Երկիր վերադառնալուց.
   ա. Մք 5:2-ի մարգարեության համաձայն՝ Քրիստոսը պետք է ծնվեր Բեթղեհեմում:
   բ. Որպեսզի այս մարգարեությունը կատարվեր, Աստծու ժողովուրդը պետք է Սուրբ Երկրում լիներ՝ Մտթ 2:4-6, Ղկս 2:4-7:
   գ. Մնացորդը՝ վերադարձած գերյալները, գործիք էր, որն Աստված օգտագործեց, որպեսզի վերստին կառուցի տաճարն ու պայմաններ կստեղծի Քրիստոսի առաջին գալստի համար՝ Մք 5:2:
   դ. Եթե մնացորդը Սուրբ Երկիր չվերադառնար, Քրիստոսը հնարա-

վորություն չէր ունենա մարմնացման միջոցով երկիր գալու՝ Ղկս 1:35, 2:4-7:

2. Նմանապես Քրիստոսի երկրորդ գալուստը կախված է Նրա նորկտակարանյան հավատացյալների մնացորդի՝ Բաբելոնում, այսինքն՝ դեգրադացված քրիստոնեությունում, իրենց գերության վերադարձից միասնության եզակի հողին՝ եկեղեցին՝ Աստծու հոգևոր տունը, կառուցելու համար՝ Եփս 2:21-22, Հյտ 2:1, Ա Տմթ 3:15, Ա Պտ 2:5.
   ա. Տերը կանչում է Իր մարդկանց մնացորդին՝ բավարարելու Իր կարիքը՝ դուրս գալով բաբելոնյան գերությունից և վերադառնալով եկեղեցու պատշաճ հողին՝ Հյտ 18:4, Եսյ 52:11, Երմ 50:8, 51:6, 9, 45:
   բ. Տիրոջ մտադրությունը ոչ թե ամբողջությամբ քրիստոնեությունը կենդանացնելն է, այլ Իր մարդկանց մնացորդին կանչելը, ովքեր պատրաստ են Իրեն հետևելու նպատակով գին վճարելու՝ Նրա մտա- հղացման իրականացման համար, և կառուցվելու որպես Մարմնի մասը՝ Մտթ 16:18, 18:17, Եփս 1:22-23, 2:21-22, 4:16, Հյտ 1:11, 22:16:

V. Եհովան ասաց, որ Իսրայելի զավակներին վերականգնում է բերելու՝ Երմ 30:17, 33:6.

Ա. Եհովան խոստացավ վերականգնում և բուժում բերել Երուսաղեմ քաղաքին՝ խ. 6:

Բ. Նա ասաց, որ նրանց համար բացահայտելու է խաղաղության ու ճշմարտության առատությունը, և որ մաքրելու է նրանց իրենց բոլոր անօրենություններից ու ներելու է նրանց անօրենությունները, որոնցով մեղանչում էին Իր դեմ և հանցանք էին գործում Իր դեմ՝ խխ. 6-8:

Գ. Եհովան նաև խոստացավ, որ Երուսաղեմն Իր համար ուրախ անուն, գովք ու փառք է լինելու բոլոր ազգերի առջև՝ խ. 9:

VI. Իսրայելի զավակների՝ իրենց գերությունից վերադառնալը եկեղեցու վերականգնման նախատիպն է՝ Եզր 1:3 -11, Նեմ 2:11, 17.

Ա. Երբ խոսում ենք եկեղեցու վերականգնման մասին, նկատի ունենք, որ ինչ-որ բան եղել է ի սկզբանե, որ այդ բանը կորսվել կամ վնասվել է, և որ այժմ կարիք կա այդ բանը իր սկզբնական վիճակին վերադարձնելու՝ Մտթ 16:18, 18:17:

Բ. Քանի որ եկեղեցին իր պատմության բազում դարերի ընթացքում դեգրադացված է դարձել, այն պետք է վերստեղծվի՝ Աստծու սկզբնական մտադրության համաձայն՝ Ա Կրթ 1:2, 12:27, Հռմ 12:4-5, 16:1, 4-5, Հյտ 1:11, 22:16:

Գ. Իսրայելի զավակների վերականգնվելը ենթադրում էր Բաբելոնից Երուսաղեմ վերադարձվելը. եկեղեցու վերականգնվելը ներառում է վերադարձը գերության ու բաժանության հողից, որի նախատիպը Բաբելոնն է՝ Սղմ 126:1-4, 133:1:

Դ. Իսրայելի զավակները վերադարձան Երուսաղեմ՝ Աստծու սահմանած եզակի հողին, Աստծու տաճարի բոլոր անոթներով հանդերձ, որոնք Բաբելոն էին տարվել՝ Բ Մնց 36:18, Եզր 5:14, 6:5.

1. Երուսաղեմը կենտրոնն էր, որտեղ Աստծու մարդիկ երկրպագում էին Աստծուն, և այս եզակի կենտրոնը պահպանում էր Աստծու մարդկանց

միասնությունը. այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր, որ Հին Կտակարանում Աստծու մարդիկ բերվեին Երուսաղեմ՝ Աստծու նախասահմանած եզակի հողին՝ Երկ Օր 12:11, 16:2, 26:2:

2. Այդ անոթները, որոնք արծաթից ու ոսկուց էին, խորհրդապատկերում են Քրիստոսի հարստությունը և Քրիստոսի փորձառության տարբեր տեսանկյունները՝ Եփս 3:8:
3. Այսօրվա Բաբելոնը ոչ միայն գերել է Աստծու մարդկանց, այլև կողոպտել է ողջ հարստությունը Աստծու տաճարից. այժմ Տերը ոչ միայն ուզում է Բաբելոնից դուրս կանչել Իր հավատարիմ մարդկանց ու նրանց վերադարձնել պատշաճ եկեղեցական կյանքին, այլև վերականգնել Քրիստոսի բոլոր տարատեսակ տեսանկյունները, որոնք կորսվել են՝ խխ. 17-19, Կղս 1:15-20, 2:16-17, 3:4:

Ե. Եկեղեցու վերականգնումը նաև պատկերված է Երուսաղեմում Աստծու տաճարը՝ Աստծու տունը, վերստին կառուցելու և Երուսաղեմ քաղաքը վերստին կառուցելու նախատիպով՝ Եզր 1:3, Նեմ 2:11, 17, Սղմ 26:8, 36:8-9, 46:1, 5, 47:2, 6-8.

1. Տաճարը՝ Աստծու ներկայության վայրը, պաշտպանության կարիք ուներ. քաղաքի պարիսպը տաճարի պաշտպանությունն էր:
2. Նոր Կտակարանում տան և քաղաքի կապը հասկանալու համար մենք պետք է գիտակցենք, որ եկեղեցին Քրիստոսի ընդլայնումն է և Քրիստոսի մեծացումը՝ Հվի 3:29-30, Եփս 4:13, Կղս 2:19.
   ա. Քրիստոսի ընդլայնման առաջին քայլը եկեղեցին է՝ որպես տունը, որը կազմված է բոլոր հավատացյալներից, որոնք հավաքված են միասին, որպեսզի լինեն Քրիստոսի մեծացումը՝ Եփս 2:21-22:
   բ. Քրիստոսի ընդլայնման երկրորդ քայլը եկեղեցին է՝ որպես քաղաքը. եկեղեցին՝ որպես տունը, պետք է ընդլայնվի և դառնա եկեղեցին՝ որպես քաղաքը՝ Մտթ 5:14, Հյտ 3:7, 12, 21:9-10:
   գ. Եկեղեցու՝ որպես տան և քաղաքի կառուցումը Աստծու հավիտենական մտահղացման կենտրոնն է՝ Եփս 2:21-22, Ա Տմթ 3:15, Հյտ 21:2-3:
3. Եթե տեղի չունենա Աստծու ժողովրդի վերականգնումը Մեծ Բաբելոնից դեպի եկեղեցական կյանք իրենց վերադառնալու ճանապարհով, Քրիստոսը չի կարողանա իրականացնել Իր երկրորդ գալուստը՝ 1:7.
   ա. Սա է պատճառը, որ Տերն այս վերջին ժամանակներում աշխատում է, որպեսզի եկեղեցու վերականգնում ձեռք բերի՝ խ. 11, 3:7-10, 22:16, Ա Կրթ 12:27, 1:2:
   բ. Այս վերականգնումը նախապատրաստություն ու հիմք է լինելու Քրիստոսի վերադարձի համար՝ Հյտ 1:7, 3:11, 19:7 9, 22:7, 12, 20:

© 2020 Living Stream Ministry